Համաձայն «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ

Վարչության 13.12.2021 թվականի որոշման

Գործում է 13.12.2021 թվականից

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ 11

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ

Սոցիալական փաթեթի հաշվի բացման եվ սպասարկման պայմաններ

ԲԱԺԻՆ 1. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.1. Եթե այլ բան նշված չէ կամ բովանդակությունը, կամ համատեքստը այլ բան չի պահանջում, սույն Պայմաններում օգտագործվող տերմիններն ու սահմանումներն ունեն հետևյալ նշանակությունը՝

Բանկ- «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ.

Որոշում – «ՀՀ Կառավարության 2014 թվականի Մարտի 27-ի N 375-Ն որոշման մեջ փոփոխություններ և 2012 թվականի Դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման մեջ լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» 28 հոկտեմբերի 2021 թվականի N 1781-Ն որոշում

ՀՀ Կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի «Սոցիալական փաթեթի հատկացման կարգը և փաթեթի մեջ մտնող ծառայությունների բովանդակությունը հաստատելու, ինչպես նաև ՀՀ կառավարության 2011թ. Դեկտեմբերի 29-ի N 1917-Ն և N 1923-Ն որոշումները, ինչպես նաև 2012թ. Ապրիլի 19-ի N 594-Ն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1691-Ն որոշումը.

Սոցիալական փաթեթի սահմանաչափ (գումար) – ՀՀ պետական բյուջեի ընդհանուր հատկացումների ներքո մեկ դրույքի (նորմալ կամ կրճատ տևողությամբ աշխատաժամանակի) համար Կառավարության որոշմամբ սահմանված սոցիալական փաթեթի ամսական գումարի չափ.

Ազատ դրամական միջոցներ - Ազատ են համարվում այն դրամական միջոցները , որոնք ենթակա չեն ուղղման Սոցիալական փաթեթի շրջանակներում մատուցված ծառայությունների դիմաց վճարումների՝ այդ թվում պարբերական վճարումների կամ Սոցիալական փաթեթի շրջանակներում տրամադրված վարկերի մասով մարումների,

Սոցիալական փաթեթի հաշիվ (սոցփաթեթի հաշիվ) կամ Հաշիվ - Բանկում բացվող հատուկ հաշիվ, որին փոխանցվում են Հաճախորդին հատկացվող սոցիալական փաթեթի գումարները.

Հաճախորդ - Որոշմամբ սահմանված աշխատող (սոցիալական փաթեթի շահառու).

Հաճախորդի ընտանիքի անմիջական անդամ - Հաճախորդի ամուսինը,ծնողը, զավակը (նաև որդեգրողը, որդեգրվածը), խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը), տատը, պապը, թոռը, համատեղ բնակվող՝ եղբայրը, քույրը.

Սոցիալական փաթեթի ծառայություններ - Որոշմամբ սահմանված ծառայություններ, այն է՝

1. Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում հանգստի ապահովում՝ որից կարող է օգտվել Շահառուն կամ նրա ընտանիքի անմիջական անդամը (անդամները).
2. հիփոթեքային վարկի ամսական վճարի մարում, որից կարող է օգտվել Շահառուն կամ նրա ընտանիքի անմիջական անդամը (անդամները), ովքեր կարող են հանդիսանալ վարկառու կամ հիփոթեքային վարկի համավարկառու՝ բնակարանի (անհատական բնակելի տան) սեփականատեր (համասեփականատեր),իրավունք ունեն օգտվելու գույքի ձեռքբերման (այդ թվում՝ գնման իրավունքով) կամ կառուցապատման նպատակով տրամադրված հիփոթեքային վարկի ամսական վճարի մարման ծառայությունից:Վերջիններս իրավունք ունեն օգտվելու նախատեսված հիփոթեքային վարկի ամսական վճարի մարման ծառայությունից՝ նույնիսկ այն դեպքում, երբ նա կամ նրա ընտանիքի անմիջական անդամը հիփոթեքային վարկն ստացել է նախքան 28.10.2021թվականի N 1782-Ն որոշումն ուժի մեջ մտնելը :
3. ուսման վճարի փոխանցում, որից կարող է օգտվել Շահառուն կամ նրա ընտանիքի անմիջական

անդամը (անդամները).Վերջինս կարող է փոխանցվել Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության այն պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատություններին, որոնք իրականացնում են հետևյալ կրթական ծրագրերը՝

1) բարձրագույն և հետբուհական հիմնական կրթական ծրագրեր.
2) նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրեր.
3) հանրակրթական հիմնական ծրագրեր (բացառությամբ մասնագիտացված և հատուկ ծրագրերի).
4) արտադպրոցական դաստիարակության (մանկապատանեկան ստեղծագործական, երաժշտական, գեղարվեստական, գեղագիտական և արվեստի) կրթական ծրագրեր.
5) նախադպրոցական կրթական ծրագրեր:

4. առողջապահական փաթեթի մեջ չներառված լրացուցիչ ծառայություններից օգտվելու վճարի մարում, որից կարող է օգտվել Շահառուն.
5. մարզա-առողջարարական և սպորտային համալիրների, լողավազանների և այլ սպորտային կազմակերպությունների ծառայություններից օգտվելու վճարի մարում, որից կարող է օգտվել Շահառուն կամ նրա ընտանիքի անմիջական անդամը (անդամները).
6. պետական սուբսիդավորմամբ ուսանողական վարկի ամսական վճարի մարում (որից կարող է օգտվել Շահառուն կամ նրա ընտանիքի անմիջական անդամը (անդամները):Վերջիններս իրավունք ունեն սոցփաթեթի գումարներից մարել պետական սուբսիդավորմամբ ուսանողական վարկի ինչպես մայր գումարը, այնպես էլ՝ տոկոսագումարները : Նույնիսկ այն դեպքում, երբ Շահառուն կամ նրա ընտանիքի անմիջական անդամը պետական սուբսիդավորմամբ ուսանողական վարկը ստացել է նախքան 28.10.2021թվականի N 1782-Ն որոշումն ուժի մեջ մտնելը :
7. «Հայաստան» Համահայկական հիմնադրամին փոխանցման կատարում /Տվյալ դեպքում նույնականացման քարտի և տարեկան կանխարգելիչ բժշկական քննություն (պարտադիր բուժզննություն) անցնելու վերաբերյալ տեղեկանքի նախապայմանները չեն գործում/: Գործում է մինչև 2021 թվականի հոկտեմբերի 7-ը: Այն Շահառուները, ովքեր մինչև 2021 թվականի հոկտեմբերի 7-ը բյուջետային տարվա ավարտն ընկած ժամանակահատվածի ամիսների համար Բանկ են ներկայացրել պարբերական վճարման հանձնարարական՝ մինչև 2021 թվականի տարեվերջ հիմնադրամին փոխանցումներ կատարելու համար, ապա Բանկը պարտավորվում է կատարել հանձնարարականը :

Սոցիալական փաթեթի պարտադիր նախապայման հանդիսացող ծառայություն- պարտադիր կանխարգելիչ բժշկական քննության (պարտադիր բուժզննության)՝ առողջապահական փաթեթի պարտադիր կանխարգելիչ բժշկական քննության բաղադրամաս, որի շրջանակներում տրամադրվող ծառայությունների ցանկը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ.

Պայմաններ - սոցիալական փաթեթի հաշվի բացման և սպասարկման սույն պայմանները, որոնք սահմանված են Բանկի կողմից ստանդարտ (տիպային) ձևով՝ Հաճախորդի կողմից առաջարկվող պայմանագրին ամբողջությամբ միանալու միջոցով պայմանագիրը կնքված համարելու համար.

Դիմում-Պայմանագիր - Պայմաններին միանալու Բանկի սահմանած դիմումի օրինակելի ձև.

Սոցփաթեթի հաշվի պայմանագիր կամ Պայմանագիր – Հաճախորդի կողմից ստորագրված և Բանկին հանձնված Դիմում-Պայմանագիրը, Պայմանները, դրանցով սահմանված հավելվածները ամբողջությամբ վերցված.

Կողմեր – Հաճախորդը և Բանկը միասին:

Պայմանների նույնականացնող տվյալները՝ Ընդունող մարմինը՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ վարչություն, ընդունման ամսաթիվ ------ ---------- 201--թ., թիվ ----- որոշում,

Սակագների նույնականացնող տվյալները՝ Ընդունող մարմինը՝_«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ վարչություն, ընդունման ամսաթիվ --------- ---------- 201--թ., թիվ --------- որոշում,

Պայմանները (Սակագները և այլ հավելվածները), ներառյալ՝ փոփոխությունները հրապարակվում են «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի ինտերնետի տնային էջի հետևյալ հղումով բացվող ենթաէջում http://www.armbusinessbank.am/am/page/bank-soc-acc :

1.2. Մեկնաբանման կանոններ. Եթե այլ բան նշված չէ կամ բովանդակությունը կամ համատեքստն այլ բան չի պահանջում, ապա Պայմաններում՝

ա) բաժինների անվանումներն օգտագործվում են միայն վկայակոչման նպատակով և չեն սահմանափակում կամ ներգործում նրանց նշանակության վրա.

բ) եզակի թվով սահմանված տերմիններն (բառերը) արտահայտում են նույնի հոգնակի թիվը ու հակառակը.

գ) որևէ բաժնին, կողմին կամ հավելվածին որևէ հղում համարվում է հղում՝ սույն Պայմանագրի տվյալ բաժնին կամ կողմին, կամ հավելվածին.

դ) ցանկացած փաստաթղթի (ներառյալ առանց սահմանափակման սույն Պայմանների) վկայակոչումը կամ սահմանումը, կամ հղումը կհամարվեն վկայակոչում այդ փաստաթղթին, որը ժամանակ առ ժամանակ կարող է լրացվել, վերանայվել կամ փոփոխվել սույն Պայմանների համաձայն, բացառությամբ այն փոփոխությունների, լրացումների կամ վերանայումների, որոնք կատարվել են սույն Պայմանների պահանջների խախտմամբ, ընդ որում՝ սույն Պայմաններին հղումը համարվում է վկայակոչում՝ նաև դրա անբաժանելի մասը կազմող փաստաթղթերին (հավելվածներ և այլն).

ե) ցանկացած անձին վկայակոչումը վերաբերվում է նաև ժամանակ առ ժամանակ նրան փոխարինող անձին կամ նրա իրավահաջորդին.

ԲԱԺԻՆ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1. Սույն Պայմանները սահմանում են Բանկի կողմից Սոցփաթեթի հաշվի բացման և վարման (սպասարկման) կարգն ու պայմանները և կարգավորում են Սոցփաթեթի հաշվի հետ կապված Բանկի և Դիմում-պայմանագիր ստորագրած Հաճախորդի միջև ծագած պայմանագրային հարաբերությունները:

2.2. Պայմանները բոլոր Հաճախորդների համար սահմանվում են ստանդարտ (տիպային) ձևով և համարվում են սոցփաթեթի հաշվի բացման և սպասարկման վերաբերյալ Հաճախորդին առաջարկվող պայմանագրի պայմաններ:

Սոցփաթեթի հաշվի պայմանագիրը կնքվում է քաղաքացիական օրենսգրքի 444 հոդվածին համապատասխան Հաճախորդի կողմից սույն Պայմաններին ամբողջությամբ միանալու միջոցով և իրականացվում է Հաճախորդի՝ Պայմաններին միանալու դիմումը (կազմված Բանկի սահմանած Դիմում-Պայմանագրի օրինակելի ձևով, ստորագրված Հաճախորդի կամ նրա կողմից լիազորված անձի (անձանց) կողմից) Բանկին հանձնելու միջոցով: Դիմում-Պայմանագիրը համարվում է Բանկին հանձնված, իսկ կոնկրետ Հաճախորդի հետ Սոցփաթեթի հաշվի պայմանագիրը կնքված՝ Հաճախորդի կողմից տրված Դիմում-Պայմանագրի վրա սոցփաթեթի հաշվի բացման մասին Բանկի նշագրման պահից:

2.3. Պայմաններին միանալու Դիմում-պայմանագրի օրինակելի ձևերը սահմանվում է Բանկի կողմից միակողմանիորեն: Բանկի կողմից Պայմաններին միանալու դիմումի օրինակելի ձևում փոփոխությունների կատարումը չի համարվում Բանկի կողմից Սոցփաթեթի հաշվի պայմանագրի պայմանների միակողմանի փոփոխություններ: Պայմաններին միանալու դիմումի օրինակելի ձևը Սոցփաթեթի հաշվի պայմանագիր կնքելու մտադրություն ունեցող Հաճախորդներին տրամադրվում է սույն Պայմանների 2.5 կետով նախատեսված կարգով հրապարակելու միջոցով:

2.4. Հաճախորդի հաշվարկային և դրամարկղային սպասարկումն իրականացվում է՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի, Որոշմամբ սահմանված կանոնների, դրանց համապատասխան բանկային կանոնների (Բանկի կանոնների), բանկային բնագավառում կիրառվող գործարար շրջանառության սովորույթների, միջազգային պրակտիկայում օգտագործվող կանոնների, ինչպես նաև սույն Պայմանների: Օրենսդրության, Որոշման, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունների դեպքերում՝ սույն

Պայմանները, մինչև դրանցում համապատասխան փոփոխությունների կատարումը, կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում համապատասխան իրավական ակտերի պահանջներին:

2.5. Բանկը, Հաճախորդների կողմից սույն Պայմաններին և Բանկի կողմից սոցփաթեթի հաշվի բացման և սպասարկման վերաբերյալ հայտարարված սակագներին, հետայսու՝ «Սակագներ», ծանոթանալու նպատակով, սույն Պայմանները (այդ թվում Պայմաններում կատարված փոփոխություններն ու լրացումները) և Սակագները, իր հայեցողությամբ, հրապարակում է տեղեկատվության այնպիսի միջոցներով, որոնք հնարավորություն են տալիս ծանոթանալու այդ տեղեկություններին: Ըստ այդմ էլ Բանկը Պայմաններին և Սակագներին վերաբերելի տեղեկությունները հրապարակում է՝
ա) Բանկի ինտերնետային տնային կայքէջում,
բ) Բանկի մասնաճյուղերում և Հաճախորդների սպասարկում իրականացնող այլ ստորաբաժանումներում առկա տեղեկատվական վահանակներում՝ հայտարարությունների տեղադրման միջոցով.
գ) Հաճախորդների էլեկտրոնային փոստային հասցեներով՝ ուղարկելու միջոցով.
դ) Բանկային հաշիվների հեռահար սպասարկման համակարգի միջոցով (եթե Բանկի և Հաճախորդի միջև կնքվել է Բանկային հաշվի հեռահար սպասարկման պայմանագիր).
ե) այլ միջոցներով, որոնք հնարավորություն են տալիս Հաճախորդին ստանալու և հավաստիանալու, որ տվյալ տեղեկությունները ստացել է Բանկից:
Բանկն իր բացառիկ հայեցողությամբ տեղեկությունները հրապարակում է վերոհիշյալ միջոցներից որևէ մեկով կամ մի քանիսով:

2.6. Պայմանները կազմվել են՝ ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքով, «ՀՀ Կառավարության 2014 թվականի Մարտի 27-ի N 375-Ն որոշման մեջ փոփոխություններ և 2012 թվականի Դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման մեջ լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Սոցիալական փաթեթի հատկացման կարգը և փաթեթի մեջ մտնող ծառայությունների բովանդակությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1917-Ն և N 1923-Ն, ինչպես նաև 2012 թվականի ապրիլի 19-ի N 594-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1691-Ն որոշմամբ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Բանկի միջև 08.02.2013թ.-ին կնքված Սոցիալական փաթեթի հատկացումն ապահովելու մասին պայմանագրով (այսուհետ՝ Լիազոր մարմնի հետ կնքված պայմանագիր), ՀՀ գործող օրենսդրությամբ:

ԲԱԺԻՆ 3. ՍՈՑՓԱԹԵԹԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1. Որոշմամբ նախատեսված սոցիալական փաթեթի ծառայություններից օգտվելու համար, հաճախորդի կողմից Դիմում-Պայմանագրի ստորագրման և Բանկին հանձնելու օրը, Բանկը Հաճախորդի անունով բացում է հատուկ բանկային հաշիվ՝ Սոցփաթեթի հաշիվ:
Սոցփաթեթի հաշիվը բացելուց հետո՝ Հաճախորդը կարող է Բանկից ստանալ սոցիալական փաթեթի հաշվի մասին տեղեկանք՝ Որոշմամբ նախատեսված դեպքերում համապատասխան հաստատություններին ներկայացնելու համար:

3.2. Սոցփաթեթի հաշվին առկա Ազատ դրամական միջոցները կանխիկացման ենթակա չեն, բացառությամբ սույն Պայմանների Բաժին 5-ով նախատեսված դեպքերի: Սոցփաթեթի հաշվից գումարը փոխանցվում է բացառապես Որոշմամբ սահմանված և հաստատված չափորոշիչներին համապատասխանող և(կամ) համապատասխան ցանկում ընդգրկված կազմակերպությունների բանկային հաշիվներին՝ համապատասխան ծառայությունը տվյալ տարում կամ 12 ամսվա ընթացքում մատուցելու պայմանով:

3.3. Հաճախորդը Սոցփաթեթի հաշիվը կարող է փոխել (այլ բանկում սոցփաթեթի հաշիվ բացել) նոր բյուջետային տարում՝ նախքան սոցիալական փաթեթի ընթացիկ տարվա առաջին գումարի փոխանցումը: Սոցփաթեթի հաշիվը փոխելու դեպքում (այլ բանկում սոցփաթեթի հաշիվ բացելու դեպքում)՝ Հաճախորդը Հաշվին առկա դրամական միջոցները սպասարկող նոր բանկ փոխանցելու համար Բանկ է ներկայացնում նոր բանկի կողմից

տրված սոցփաթեթի հաշվի մասին տեղեկանք: Այդ տեղեկանքի հիման վրա՝ Բանկը Հաճախորդի սոցփաթեթի հաշվում առկա դրամական միջոցները փոխանցում է սոցփաթեթի հաշիվը սպասարկող նոր բանկում բացված սոցփաթեթի հաշվին:

3.4. Բանկը Հաճախորդի կարգադրությամբ (հանձնարարականով), այդ թվում՝ պարբերական վճարման հանձնարարականով (հանձնարարագիր), ինչպես նաև օրենսդրությամբ, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և սույն պայմաններով սահմանված (նախատեսված) դեպքերում Հաճախորդի կողմից Հաշվից դրամական միջոցների ելքագրման գործառնություններ իրականացնելու համար, Բանկին ներկայացված պատշաճ ձևով կազմված այլ փաստաթղթերի հիման վրա, Հաշվից փոխանցում է կատարում, իսկ Որոշմամբ նախատեսված դեպքերում՝ կանխիկ դրամական միջոցներ է տրամադրում ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ օրը (պարբերական վճարման հանձնարարագրում նշված վճարման օրը/օրերին, իսկ եթե այդպիսի օր նշված չէ, ապա հանձնարարագիր ներկայացնելու օրը):
Որոշմամբ սահմանված ուղղություններով փոխանցում իրականացնելու նպատակով տրված պարբերական վճարման հանձնարարականը տեխնիկական խնդիրների պատճառով չկատարման դեպքում Բանկը չփոխանցված ամսվա/ամիսների համար նախատեսված գումարը փոխանցում է՝ առանց Հաճախորդի լրացուցիչ համաձայնության:
Նշված գործառնությունները Բանկի հայեցողությամբ կարող են իրականացվել ավելի կարճ ժամկետներում՝ Բանկի կողմից նախատեսված կարգով և պայմաններով: Կարգադրությունները (հանձնարարականները) կատարման ընդունելու, հետկանչելու, վերադարձնելու (չեղարկելու) կարգը (ընթացակարգը) սահմանվում է Բանկի կողմից միակողմանիորեն և, Բանկի ընտրությամբ, Հաճախորդին հասանելի է դարձվում սույն Պայմանների 2.5 կետում նշված միջոցներից որևէ մեկով կամ մի քանիսով:

3.5. Հաշվում եղած դրամական միջոցների տնօրինման ուղղությունների պայմաններն ու կարգը, սահմանափակումները նախատեսված է սույն Պայմանների Բաժին 5-ով: Հաշվով գործառնությունների իրականացման Հաճախորդի իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով կամ սույն Պայմաններով նախատեսված դեպքերում:

3.6. Այն դեպքերում, երբ Հաճախորդը սույն Պայմաններով նախատեսված ծառայությունների ձեռք բերման նպատակով ցանկանում է Հաշվից վճարում (փոխանցում) կատարել, չնայած դրանում դրամական միջոցների բացակայությանը կամ անբավարարությանը, Բանկը կարող է Հաճախորդի Հաշիվը վարկավորել՝ տրամադրելով վարկային գիծ Բանկի և Հաճախորդի միջև կնքված առանձին պայմանագրով (համաձայնագրով) նախատեսված կարգով ու պայմաններով:

3.7. Եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմաններով կամ Սոցփաթեթի հաշվի պայմանագրի անբաժանելի մասը կազմող լրացուցիչ համաձայնագրերով, ապա Բանկը Հաճախորդի Հաշվին դրամական միջոցները մուտքագրում է դրամարկղային, հաշվարկային փաստաթղթերի և դրամական միջոցների փոխանցման այլ կարգադրությունների (հանձնարարականների) հիման վրա:
Հաճախորդի Հաշվին դրամական միջոցների մուտքագրումն իրականացվում է Բանկի կողմից սահմանված կարգով ոչ ուշ, քան դրամական միջոցները կամ համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ օրը, պայմանով, որ սահմանված ժամկետում Բանկը ստացել է պատշաճ ձևով կազմված փաստաթղթերը, որոնցից միանշանակ հետևում է, որ դրամական միջոցներ ստացողը Հաճախորդն է և դրանք պետք է մուտքագրվեն Հաճախորդի Հաշվին: Միաժամանակ, եթե այլ բան սահմանված (նախատեսված) չէ գործող օրենսդրությամբ, սույն Պայմաններով կամ Կողմերի միջև կնքված առանձին համաձայնագրով (Պայմանագրով), թույլատրվում է Հաճախորդի Հաշվին դրամական միջոցների մուտքագրումը երկու վավերապայմաններով, որոնք սահմանվում են Բանկի կողմից միակողմանիորեն և, Բանկի ընտրությամբ, Հաճախորդին հասանելի է դարձվում սույն Պայմանների 2.5 կետում նշված միջոցներից որևէ մեկով կամ մի քանիսով:
Եթե Բանկի ստացած վճարային փաստաթուղթը հնարավորություն չի տալիս միանշանակ որոշելու դրամական միջոցներ ստացող Հաճախորդին (օրինակ, փաստաթուղթը պարունակում է Հաճախորդի աղավաղված կամ ոչ ճիշտ անվանումը, Հաշվի համարը և այլն), ապա դրամական միջոցները մուտքագրվում են Հաճախորդի հաշվին միայն գործող օրենսդրությանը, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական

ակտերին համապատասխան Բանկի կողմից նախատեսված կարգով և ժամկետներում դրամական միջոցներ ստացողին պարզելուն ուղղված միջոցառումներն իրականացումից հետո:
Բանկի կողմից Հաճախորդի Հաշվին սխալմամբ մուտքագրված դրամական միջոցները Բանկը անակցեպտ կարգով սույն Պայմաններով նախատեսված ժամկետներում դուրս է գրում (գանձում է) Հաճախորդի Հաշվից՝ առանց վերջինիս լրացուցիչ կարգադրության (համաձայնության), Բանկի հաշվարկային և այլ փաստաթղթերի հիման վրա:
Եթե Հաշվին փոխանցվել են դրամական միջոցներ, որոնք տարբերվում են Հաշվի արժույթից, ապա Բանկը Հաշվին մուտքագրում է դրան համարժեք գումար՝ հաշվարկված Բանկի կողմից անկանխիկ գործարքների համար տվյալ գործառնության իրականացման օրվա դրությամբ սահմանած փոխարժեքով:

3.8. Սոցփաթեթի հաշիվը վարկավորելիս՝ Բանկին հասանելիք դրամական միջոցները Բանկն անակցեպտ կարգով (առանց Հաճախորդի լրացուցիչ կարգադրության (հանձնարարության) դուրս է գրում Հաճախորդի Հաշվից, եթե վերը նշված պայմանագրերում (համաձայնագրերում) առկա է նման եղանակով գանձումներ կատարելու Բանկի իրավունքի վերաբերյալ պայման: Դրամական միջոցների դուրս գրումը կատարվում է վերոհիշյալ պայմանագրերում (համաձայնագրերում) նշված ժամկետներում կամ Հաշվին դրամական միջոցներ ստացվելուն պես:

3.9. Բանկը Հաճախորդի համար բացում է Հաշիվ, եթե՝
- Հաճախորդը Բանկին ներկայացրել է Հաշվի բացման և վարման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, և
- Բանկում բացակայում է Հաշվի բացմանը խոչընդոտող պետական իրավասու և այլ մարմինների որոշումները:

3.10. Բանկն իրավունք ունի հրաժարվել Բանկային հաշվի պայմանագիր կնքելուց և մերժել Հաշիվ բացելը՝ միայն օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

ԲԱԺԻՆ 4. ԲԱՆԿԻ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ

4.1. Բանկն իրավունք ունի.

4.1.1. Հաճախորդից ստանալու տեղեկություններ՝ Սոցփաթեթի հաշվում ներդրվող միջոցների ծագման աղբյուրի վերաբերյալ, եթե վերջինս սեփական միջոցներից գումար է մուտքագրում Սոցփաթեթի հաշվին,

4.1.2. Հրաժարվել հաշվարկային և դրամարկղային գործառնությունների կատարումից այնպիսի փաստերի առկայության դեպքում, որոնք վկայում են Հաճախորդի կողմից Որոշման և Պայմանների բաժին 5-ով և 6-ով նախատեսված պայմանների խախտման մասին,

4.1.3. Բանկը, հանդիսանալով հարկային գործակալ, Հաճախորդի հարկային պարտավորությունները կատարելու նպատակով, Հաճախորդին վճարվելիք տոկոսագումարներից իրականացնում է հարկերի և պարտադիր այլ վճարների գանձում՝ համաձայն գործող օրենսդրության: Հաշվին հաշվեգրված տոկոսների դիմաց Բանկը տոկոսներ չի հավելագրում:

4.1.4. Միակողմանի հրաժարվել Պայմանագրի կատարումից, եթե՝
ա/ մեկ տարվա ընթացքում սոցփաթեթի հաշվով գործառնություններ չեն կատարվել և այդպիսի հրաժարումը չի հակասի տվյալ պահին գործող օրենսդրությամբ սահմանված իմպերատիվ կանոններին,
բ/ Հաճախորդը սոցփաթեթի հաշիվ է բացել այլ բանկում,
գ/ Սոցփաթեթի հաշվի բացման պահից եռամսյա ժամկետում սոցփաթեթի հաշվին չի մուտքագրվել սոցփաթեթի գումար/գումարներ,
դ/ Բանկի նախաձեռնությամբ լուծվել է Լիազոր մարմնի հետ կնքված Պայմանագիրը:

4.1.5. Հաճախորդին տրամադրել վարկային գիծ (վարկ)՝ Բանկի կառավարման լիազոր մարմնի կողմից սոցփաթեթի հաշիվները վարկավորելու մասին որոշման առկայության դեպքում, սոցիալական փաթեթի հաշվի հիման վրա՝ սոցիալական փաթեթի շրջանակներում փոխանցումներ կատարելու համար: Ընդ որում՝ տրամադրված վարկային գծի (վարկի) մարումը նույնպես համարվում է սոցիալական փաթեթի ծառայություն:

Այս դեպքում Սոցփաթեթի հաշվին փոխանցված կամ մուտքագրված գումարներն օգտագործվում են որպես վարկային գծի մարում: Սոցփաթեթի հաշվի վարկավորման դեպքում՝ կնքվում է վարկային գծի (վարկի) տրամադրման վերաբերյալ համապատասխան պայմանագիր:

4.1.6. Պայմանագրի լուծումից (միակողմանի դադարեցնելուց) հետո՝ Պայմանների կետ 3.1.-ում նշված բանկային հաշիվը փակվում է, իսկ հաշվի մնացորդը, Հաճախորդի դիմումի հիման վրա, փոխանցվում է այլ բանկում սպասարկվող սոցփաթեթի հաշվեհամարին:

4.2. Հաճախորդն իրավունք ունի.

4.2.1. անվճար ստանալ իր սոցփաթեթի հաշվին մուտքագրված գումարների մասին տեղեկատվություն (այսուհետ՝ քաղվածք)՝ առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ,
4.2.2. Ինքնուրույն տնօրինել իր Սոցփաթեթի հաշվում գտնվող դրամական միջոցները՝ հաշվի առնելով Պայմանների 5-րդ բաժնով և Որոշմամբ նախատեսված սահմանափակումները,
4.2.3. Որոշման 10-րդ կետով նախատեսված սոցփաթեթի հաշիվը փոխելու դեպքում՝ միակողմանի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Բանկին, որի հիման վրա փակվում է Սոցփաթեթի հաշիվը, հաշվի մնացորդը փոխանցվում է Հաճախորդի ներկայացրած այլ առևտրային բանկում բացված սոցփաթեթի նոր հաշվեհամարին,
4.2.4. Անձամբ, երրորդ անձանց միջոցով կանխիկ մուտքագրել կամ փոխանցել գումար սոցփաթեթի հաշվին, ինչպես նաև բացառապես Պայմանագրով նախատեսված նպատակների համար օգտագործել այլ միջոցներից ստացված գումարները:

4.3. Բանկը պարտավոր է.

4.3.1. Իր նախաձեռնությամբ Լիազոր մարմնի հետ կնքված Պայմանագիրը լուծելու մտադրության մասին պատշաճ կարգով ծանուցել Հաճախորդին՝ նշված պայմանագրի լուծման նախատեսվող ժամկետից առնվազն մեկ ամիս առաջ: Լիազոր մարմնի հետ կնքված Պայմանագրի լուծման դեպքում՝ Հաճախորդի սոցիալական փաթեթի հաշվին առկա սոցիալական փաթեթի գումարները փոխանցվում են նրա՝ մեկ այլ բանկում բացված սոցիալական փաթեթի հաշվին.
4.3.2. Հաճախորդին տրամադրել սոցփաթեթի հաշվի բացման մասին տեղեկանք՝ այդ հաշվին սոցիալական փաթեթի գումարների փոխանցումներն իրականացնելու նպատակով.

4.3.3. Սոցիալական փաթեթի հաշվին առկա դրական մնացորդի դիմաց Հաճախորդին վճարել տոկոս՝ Սակագներով նախատեսված չափով և կարգով, իսկ եթե նման կարգ սահմանված չէ, ապա Բանկում գործող ցպահանջ ավանդի տոկոսադրույքին համապատասխան.
4.3.4. Հաճախորդի կողմից կամ նրա անվամբ մուտք եղած կամ փոխանցված դրամական միջոցները մուտքագրել Հաճախորդի Սոցփաթեթի հաշվին ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու/ համապատասխան դրամական միջոցների ընդունման օրվան հաջորդող բանկային օրը.
4.3.5. Հաճախորդի համար Սոցփաթեթի հաշվի բացումն ու սպասարկումը, ինչպես նաև այդ հաշվից սոցիալական փաթեթի գումարի փոխանցումներն իրականացնել անվճար.
4.3.6. Սոցփաթեթի հաշվից փոխանցում իրականացնել որոշմամբ սահմանված սոցիալական փաթեթի այլ ծառայությունների համար, իսկ մնացած գումարը կուտակել Հաճախորդի սոցիալական փաթեթի հաշվին.
4.3.7. Հաճախորդի պահանջով Սոցփաթեթի հաշվից դրամական միջոցներ ելքագրել ոչ ուշ, քան վերջինիս կողմից ներկայացված համապատասխան փաստաթղթերը Բանկ մուտք լինելուն հաջորդող բանկային օրը: Առանց Հաճախորդի կարգադրության և համաձայնության՝ հաշվում եղած դրամական միջոցներ դուրս գրել Սույն Պայմաններով նախատեսված դեպքերում և կարգով.
4.3.8. Դիմում-Պայմանագրում նշված եղանակով (փոստային, էլեկտրոնային կամ առձեռն) Հաճախորդին տրամադրել սոցփաթեթի հաշվի քաղվածք՝ յուրաքանչյուր ամսում մեկ անգամ անվճար, իսկ Հաճախորդի պահանջով մեկ ամսվա ընթացքում մեկից ավել անգամ տրամադրել՝ համաձայն Բանկի կողմից հայտարարված Սակագների.
4.3.9. Հաճախորդի կողմից չպահանջված կամ չստացված հաշվի քաղվածքները պահպանել 3 (երեք) տարի.

4.3.10. Պայմանագրի գործողության ընթացքում նախատեսվող փոփոխությունների (Պայմանների, Կողմերի իրավունքների, պարտականությունների և այլ պայմանների) վերաբերյալ, առնվազն 15 (տասնհինգ) օր առաջ Պայմանների 2.5. կետով սահմանված կարգով և(կամ) օրենքով նախատեսված կարգով և(կամ) գրավոր, փոստային կապի միջոցով տեղեկացնել Հաճախորդին:

4.4. Հաճախորդը պարտավոր է.

Սոցփաթեթի հաշվի բացման համար ներկայացնել Բանկի կողմից պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերը.

ԲԱԺԻՆ 5. ՍՈՑՓԱԹԵԹԻ ՀԱՇՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Սոցիալական փաթեթի գումարն ունի կուտակային բնույթ, այսինքն՝ պահպանվում և կուտակվում է Բանկում բացված սոցփաթեթի հաշվին: Սոցիալական փաթեթի գումարը Հաճախորդներին սեփականության իրավունքով չի պատկանում՝ բացառությամբ սույն Պայմանների 5.3 կետով սահմանված դեպքերի:

5.2. **Սահմանել, որ 2017 թվականից սկսած յուրաքանչյուր տարի սոցիալական փաթեթի շահառուների համար (բացառությամբ զինծառայողների, քրեակատարողական ծառայողների, փրկարար ծառայության ծառայողների) պարտադիր կանխարգելիչ բժշկական քննություն (պարտադիր բուժզննություն) անցնելն ակտիվացնում է սոցիալական փաթեթի՝ սույն որոշման N 2 հավելվածով նախատեսված ծառայությունները և (կամ) սոցփաթեթի հաշվում առկա դրամական միջոցները կանխիկացնելու իրավունքը՝ կանխարգելիչ բժշկական քննություն (պարտադիր բուժզննություն) անցնելու վերաբերյալ տեղեկանքն ստանալու օրվանից մեկ տարի (365 օր) ժամկետով: Ընդ որում՝ սույն կետով նախատեսված սահմանափակումը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ շահառուն տվյալ տարում արդեն օգտվել է սոցիալական փաթեթի ծառայություններից և ունի ձևավորված պարտավորություն**

5.3. Սոցիալական փաթեթում առկա դրամական միջոցները հնարավոր է կանխիկացնել հետևյալ դեպքերում՝

1) աշխատողի՝ կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու և սոցիալական փաթեթից օգտվելու իրավունքի դադարեցման ժամանակ (երբ դադարում է նրա՝ սոցիալական փաթեթ ստանալու իրավունքը, և նրա սոցփաթեթի հաշվին առնվազն երեք ամիս սոցիալական փաթեթի գումարների փոխանցումներ չեն կատարվել): Այս դեպքում սոցիալական փաթեթի հաշվում առկա դրամական միջոցները կանխիկացնելու համար՝ Հաճախորդը սոցփաթեթի հաշիվը սպասարկող բանկ է ներկայացնում իր կենսաթոշակի վկայականը, որի պատճենը պահվում է Բանկում.

2) Հաճախորդի մահվան դեպքում ժառանգի կողմից՝ սոցփաթեթի հաշվում առկա միջոցներն օրենքին համապատասխան ժառանգաբար նրան անցնելու ժամանակ, որի դեպքում ժառանգը սոցփաթեթի հաշիվն սպասարկող Բանկ է ներկայացնում ժառանգության իրավունքի վկայագիր, որի պատճենը պահվում է Բանկում.

3) «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի հիման վրա, որպես կատարված սոցիալական վճարների փոխհատուցում, սոցիալական փաթեթի հաշվում ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ առկա մնացորդը, բայց ոչ ավելի, քան նախորդ տարվա ընթացքում ստացման ենթակա աշխատավարձից և ձեռնարկատիրական եկամուտներից հաշվարկված ու փոխանցված սոցիալական վճարների չափը: Այս դեպքում աշխատողը, յուրաքանչյուր տարվա ավարտից հետո, իր սոցիալական փաթեթի հաշվում առկա համապատասխան չափով դրամական միջոցները կանխիկացնելու համար Բանկ է ներկայացնում դիմում՝ նախորդ տարվա ընթացքում իր կողմից ստացման ենթակա աշխատավարձից և ձեռնարկատիրական եկամուտներից հաշվարկված ու փաստացի մասնակիցների ռեեստր վարողին փոխանցված սոցիալական վճարների չափի մասին հարկային մարմնից տեղեկատվություն ստանալու մասին: Բանկը, հարկային մարմնից ստացված տեղեկատվության հիման վրա, աշխատողի նախորդ տարիների ընթացքում կուտակված սոցիալական փաթեթի գումարները կանխիկ վճարում է աշխատողին, բայց ոչ ավելի, քան տեղեկանքում նշված՝ հաշվարկված և փոխանցված սոցիալական վճարների չափը: Սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող զինծառայողների, քրեակատարողական ծառայողների, փրկարար ծառայության ծառայողների համար Բանկում պարտադիր կանխարգելիչ բժշկական քննությունից (պարտադիր բուժզննությունից) չօգտվելու հիմք կարող է հանդիսանալ զինծառայող կամ նրան հավասարեցված անձ կամ փրկարար ծառայության ծառայող լինելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթը (տեղեկանքը) կամ պարտադիր կանխարգելիչ բժշկական քննությունից

(պարտադիր բուժզննությունից) չօգտվելու վերաբերյալ միասնական տեղեկանքը (Հավելված 9 /կոդ ՀՍ/Կ-17/Ա-003-09/)/՝համաձայն որի վերոնշյալ անձանց սոցփաթեթի հաշիվներում առկա միջոցներն ամբողջությամբ ենթակա են օգտագործման սոցփաթեթի այլ ծառայություններ ձեռք բերելու համար:

ԲԱԺԻՆ 6. ՍՈՑՓԱԹԵԹԻ ՀԱՇՎԻՑ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

6.1. Սոցփաթեթի հաշվից գումարի փոխանցման համար հիմք է հետևյալ փաստաթղթերից որևէ մեկը՝

- *կանխավճարի փոխանցման հաշիվ կամ տեղեկանք,* որտեղ արտացոլված են ծառայությունը մատուցող կազմակերպության վավերապայմանները և ծառայությունը ստացող ֆիզիկական անձի տվյալները (անունը, ազգանունը, բնակության վայրը, քաղաքացիությունը, Անձը հաստատող փաստաթղթի տվյալները (համարը, վավերականության ժամկետը, ում կողմից է տրված), ծառայության տեսակը և փոխանցման նպատակը.
- հաշվարկային փաստաթուղթ (հարկային հաշիվ կամ ճշգրտող հարկային հաշիվ կամ հաշիվ վավերագիր կամ ճշգրտող հաշիվ վավերագիր), որի վավերապայմանները սահմանված են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով.
- Որոշման 10-րդ կետով նախատեսված սոցփաթեթի հաշիվը փոխելու դեպքում՝ սոցփաթեթի հաշիվը սպասարկող *նոր բանկի կողմից տրված սոցփաթեթի հաշվի մասին տեղեկանք:*

Հաճախորդի (աշխատողի) ընտանիքի անմիջական անդամների սոցիալական փաթեթի ծառայություններից օգտվելու դեպքում, սոցփաթեթի հաշվից գումարի փոխանցման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր են համարվում նաև՝

1) ամուսնու դեպքում՝ ամուսնության վկայականը.
2) զավակի դեպքում՝ ծննդյան վկայականը.
3) ծնողի դեպքում՝ ծնողի անձը հաստատող փաստաթուղթը և սոցփաթեթի շահառուի ծննդյան վկայականը.
4) որդեգրողի, որդեգրվածի, խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի դեպքում՝ որդեգրելու կամ որդեգրվելու, խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվելու դեպքում՝ համապատասխան հիմքը հաստատող փաստաթուղթը.
5) տատի, պապի դեպքում՝ շահառուի ծննդյան վկայականը, ծնողի ծննդյան վկայականը, տատի կամ պապի անձը հաստատող փաստաթղթերը.
6) թոռան դեպքում՝ շահառուի զավակի և թոռան ծննդյան վկայականները.
7) համատեղ բնակվող եղբոր կամ քրոջ դեպքում՝ համատեղությամբ բնակվելու հիմքը հաստատող փաստաթուղթը, ինչպես նաև ծնողի կամ ծնողների անձը հաստատող փաստաթուղթը կամ փաստաթղթերը, շահառուի ծննդյան վկայականը և եղբոր կամ քրոջ ծննդյան վկայականը:

6.2. Հանգստի ապահովման ծառայությունից օգտվելու դեպքում՝ Հաճախորդը սույն Պայմանների 6.1 կետով նախատեսված փաստաթուղթը/երը Բանկ է ներկայացնում մինչև այդ ծառայությունից օգտվելը կամ ոչ ուշ, քան այդ ծառայությունից օգտվելուց հետո 15 օրվա ընթացքում:

6.3. Սոցիալական փաթեթի շրջանակներում փոխանցում իրականացնելիս՝ Հաճախորդը Բանկում պետք է ներկայացնի անձը հաստատող փաստաթուղթ:

6.4. Հիփոթեքային վարկի ամսական վճարի մարման ծառայությունից օգտվելու դեպքում՝ Հաճախորդը հիփոթեքային վարկի ամսական վճարի կամ նրա ընտանիքի անմիջական անդամը ներկայացնում է նաև Որոշմամբ հաստատված ձևով ներկայացված տեղեկանքը, եթե Հաճախորդի հիփոթեքային վարկը տրամադրված չէ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից, որտեղ նշված լինի, որ՝

1) սոցփաթեթի շահառուի կամ շահառուի ընտանիքի անմիջական անդամի հիփոթեքային վարկը հանդիսանում է գույքի ձեռքբերման (այդ թվում՝ գնման իրավունքով) կամ կառուցապատման նպատակով տրամադրված հիփոթեքային վարկ.

2) սոցփաթեթի շահառուն կամ նրա ընտանիքի անմիջական անդամը հանդիսանում է տվյալ վարկի վարկառու կամ համավարկառու:

6.5. «Հայաստան» Համահայկական հիմնադրամին փոխանցման կատարման դեպքում՝ Հաճախորդը ներկայացնում է վճարման հանձնարարական /տվյալ դեպքում անձը հաստատող փաստաթղթի և տարեկան

կանխարգելիչ բժշկական քննություն (պարտադիր բուժզննություն) անցնելու վերաբերյալ տեղեկանքի նախապայմանները չեն գործում/:

ԲԱԺԻՆ 7. ԲԱՆԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ.

7.1. Գումարի փոխանցման նպատակով Հաճախորդի կողմից կեղծ, անվավեր, իրականությանը չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացվելու դեպքում՝ Բանկը պատասխանատվություն չի կրում:

7.2. Հաճախորդի կողմից տրամադրված Պարբերական վճարումների իրականացման Հայտ-Հանձնարարականում վճարումների իրականացման օրվա դրությամբ Հաճախորդի սոցփաթեթի հաշվում առկա Հայտ- Հանձնարարականում նշված գումարի բացակայության դեպքում՝ Բանկը փոխանցում չի իրականացնում, այդ օրվան հաջորդող օրերի ընթացքում մուտք եղած գումարները փոխանցվում է՝ Հաճախորդի կողմից առանձին վճարման հանձնարարական ներկայացնելու դեպքում:

ԲԱԺԻՆ 8. ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ ԿԱԶՄՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

8.1. Բանկը երաշխավորում է Հաճախորդի մասին տեղեկությունների գաղտնիությունը: Հաճախորդի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են տրամադրվել՝ բացառապես «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, ինչպես նաև սույն Պայմանների 8.2. կետով նախատեսված դեպքերում:

8.2. Հաճախորդը Դիմում-Պայմանագրի ստորագրմամբ տալիս է իր համաձայնությունը այն մասին, որ իր վերաբերյալ սոցփափեթի հաշվի պայմանագրի առարկան կազմող հարաբերությունների ընթացքում Բանկին հայտնի դարձած բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունները Բանկը տրամադրի/ հայտնի՝
ա/ իր ամուսնուն, զավակներին.
բ/ ՀՀ պետական լիազոր մարմիններին (Որոշմամբ սահմանված դեպքերում առողջապահական փաթեթի վճարումների իրականացման կամ հաշվետվությունների ներկայացման ժամանակ).
գ/ Որոշմամբ սահմանված դեպքերում:

ԲԱԺԻՆ 9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1 Բոլոր վեճերը, որոնք ծագում են Պայմանագրի կատարման ընթացքում, Կողմերի կողմից լուծվում են բանակցությունների միջոցով՝ երկկողմանի ընդունելի որոշումներ կայացնելու միջոցով:

9.2 Բանկը պարտավոր է քննել Հաճախորդի բողոք-պահանջը, եթե այն ներկայացվել է մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ Հաճախորդը իմացել է կամ կարող էր իմանալ իր իրավունքի խախտման մասին:

9.3 Բանկը պարտավոր է 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Հաճախորդին տալ վերջնական պատասխան: Բողոք-պահանջի գրավոր պատասխանով բավարարված չլինելու դեպքում՝ Հաճախորդն իր իրավունքները պաշտպանելու համար կարող է դիմել դատարան կամ ֆինանսական համակարգի հաշտարարին կամ ՀՀ կենտրոնական բանկ կամ արբիտրաժային տրիբունալ, եթե առկա է արբիտրաժային համաձայնություն:

Բանակցություններն անարդյունք գրանցվելու կամ փոխադարձ ընդունելի որոշումներ չկայացվելու դեպքում՝ վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը: Ֆիզիկական անձ Հաճախորդը հնարավորություն ունի Բանկային հաշվի պայմանագրից բխող բողոքպահանջները ներկայացնել ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, դեպքերում ու պայմաններով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված Պայմանագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000,00 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000,00 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

ԲԱԺԻՆ 10. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2016 թվականի հունվարի 1-ից հետո սոցփաթեթի ծառայություններից օգտվելու և/կամ սոցփաթեթի հաշվում առկա դրամական միջոցների կանխիկացման համար Հաճախորդը պարտավոր է Բանկ ներկայացնել որոշմամբ սահմանված առողջապահական փաթեթի պարտադիր կանխարգելիչ բժշկական քննության (պարտադիր բուժզննության) բաղադրիչից օգտվելու մասին համապատասխան տեղեկանքը (բացառությամբ զինծառայողների, քրեակատարողական ծառայողների, փրկարար ծառայության ծառայողների):

ԲԱԺԻՆ 11. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11.1 Ծանուցումներ և Կողմերի գրավոր հաղորդակցություն.

Դիմում-Պայմանագրի ստորագրմամբ Հաճախորդը և Բանկը պայմանավորվում են, որ՝

ա) սույն Սոցփաթեթի հաշվի բացման պայմանագրով պահանջվող կամ նախատեսվող ցանկացած պահանջ, ծանուցում, առաջարկ կամ այլ հաղորդում պետք է լինեն գրավոր ձևով, ստորագրված լինեն Կողմերի լիազորված անձանց կողմից, բացառությամբ՝ էլեկտրոնային եղանակով կամ կարճ հաղորդագրության /SMS/ միջոցով իրականացվող հաղորդակցության և պետք է ուղարկվեն սույն Սոցփաթեթի հաշվի բացման պայմանագրով նշված հասցեներով.

բ) սույն Սոցփաթեթի հաշվի բացման պայմանագրով պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերի հետ կապված ցանկացած թղթակցություն, դատական ծանուցում, այդ թվում՝ դատավարական փաստաթուղթ, ուղարկվում են Սոցփաթեթի հաշվի բացման պայմանագրով նշված հասցեներով:

Յուրաքանչյուր նման ծանուցում համարվում է պատշաճ ուղարկված, եթե (ա) հանձնվել է առձեռն, կամ (բ) ուղարկվել է փոստային ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջոցով՝ պատվիրված նամակով և ստացման վերաբերյալ հետադարձ ծանուցմամբ, կամ (գ) ուղարկվել է սուրհանդակային ծառայության միջոցով՝ ստացման վերաբերյալ հետադարձ ծանուցմամբ, դ) էլեկտրոնային ծանուցագիրը /ծանուցումը/ ուղարկվել է Հաճախորդի կողմից Դիմում-Պայմանագրում նշած էլեկտրոնային հասցեին, և առկա է այն ստանալու մասին էլեկտրոնային հավաստում, ե) Բանկի հաղորդումը /ծանուցումը/ ուղարկվել է կարճ հաղորդագրության /SMS/ միջոցով Հաճախորդի կողմից Դիմում-Պայմանագրում նշված բջջային հեռախոսահամարին, և առկա է այն ստացված լինելու վերաբերյալ հավաստում:

Սույն կետում նշված գրավոր փաստաթղթերը/հաղորդումները համարվում են հասցեատիրոջ կողմից պատշաճ ստացված (հանձնված), թեկուզև հասցեատերը ծանուցման հասցեում այլևս չի գտնվում (չի բնակվում), եթե սույն Պայմանագրի 11.2. կետին համապատասխան Կողմերը միմյանց գրավոր չեն հայտնել իրենց ծանուցման (փոստային, էլեկտրոնային կամ այլ) հասցեները (գտնվելու/բնակության վայրերը) փոխելու մասին: Բանկի ցանկացած պահանջ, ծանուցում կամ այլ հաղորդում համարվում է Հաճախորդի կողմից պատշաճ ստացված (հանձնված) սույն կարգով ուղարկման պահից սկսած տասներորդ օրը, թեկուզև հետագայում պարզվի, որ Հաճախորդը նշված ծանուցումը փաստացի չի ստացել: Պահանջի, ծանուցման կամ այլ հաղորդման ուղարկման օրը որոշվում է Բանկի ելքային ամսաթվով կամ փոստի ծառայություններ մատուցող կազմակերպության դրոշմակնիքով:

11.2. Յուրաքանչյուր կողմ իրավունք ունի փոփոխել Սոցփաթեթի հաշվի բացման պայմանագրի շրջանակներում օգտագործվող իր ծանուցման հասցեն, հեռախոսահամարները, և այդ մասին Կողմերը պարտավորվում են նախօրոք՝ առնվազն տասը աշխատանքային օր առաջ տեղեկացնել մյուս կողմին՝ միմյանց ծանուցման (փոստային) հասցեների (գտնվելու (բնակության) վայրերի և այլ տվյալների փոփոխությունների մասին, հակառակ դեպքում՝ Կողմերի միջև Սոցփաթեթի հաշվի բացման պայմանագրից բխող գրավոր թղթակցություններն

իրականացվում են Կողմերի կողմից Դիմում-Պայմանագրում նշված ծանուցման հասցեներով: Փոփոխությունների մասին մյուս կողմին չիրազեկելու իրավական հետևանքների ռիսկը կրում է իրազեկելու պարտավորություն կրող անձը:
11.3. Սույն Պայմանները Հաճախորդի համար ուժի մեջ է մտնում Դիմում-Պայմանագրի ստորագրման պահից և գործում մինչև Սոցփաթեթի հաշիվը փակելը կամ Սոցփաթեթի հաշվի պայմանագիրը լուծելը:

11.4.ՀՀ օրենսդրության և ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերի պարտադիր պահանջները, որոնց գործողությունը տարածվում է Պայմանների վրա, ենթակա են պարտադիր կատարման: ՀՀ գործող օրենսդրության, Որոշման, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունների դեպքերում սույն Պայմանները, մինչև դրանցում համապատասխան փոփոխությունների կատարումը, կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում համապատասխան իրավական ակտերի պահանջներին:

11.5.Սույն Պայմանների դրույթների կատարումը պարտադիր է Հաճախորդի և Բանկի իրավահաջորդների համար: